

ԿԻՂԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

ԺԲ.

ԱԶԱՐԻԱ ԶՈՒՂԱՅԵՏԻ

ՍԻՄՈՆԻ ԵՄՍԻՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

(աւել-)

[Ընդհատում 213 էջէն]

րակները, այս պաշտօնին մօտիկ երկու եկեղեցիներ կան մէկը Ա. Փելիլ, որ կ'ըստէր թէ թագաւորին եկեղեցին էր, իսկ միւսը որ նախորդած է Սուրբ Սալիսայի, կաթողիկոսական եկեղեցի է. բիշ ծախքով կարելի էր նորոգել տաճը, բայց չեն համարձակիր նորոգել: Վասնզի թիւրքը առած է զանոնք Հայոց ձեռքէն առարկելով թէ բարձրագոյն են և չենուած են իրեն բերդ: Անոնք կը յուսան ընել այդ նորոգութիւնները երբ Տէրը կամի և զանոնք յանձնէ քրիստոնէից տիրապետութեան: Բոլոր Հայերը միշտ այս բանը կը խնդրեն իրենց ազօթներուն մէջ, և կ'ըսեն մեզի.— «Ազատեցէ՛ք մեզ այս հարստահարութեանն որուն տակ կ'ապրինք, ան տանն մենք լատին (կաթողիկ) կ'ըլլանք. այն տանն զուր տէրը կ'ըլլաք մեր մարմինն և հոգիին, և ինչ որ կը հրամայէք, կ'ընենք այն տանն»(*):

Նոյն քաղաքին մէջ կան նաև ուրիշ 12 եկեղեցիներ կամ մատուռներ, որոնց մէջ կը մատուցուի պատարագը, և կիրակի ու ամեն օրեր պաշտամունքներ կը կատարեն: Աստիք կը պահուին պաշտան կերպով, թէ և անոնցմէ շատերուն մէջ պղծիմէ կամ երկաթէ խաչերէն զատ ուրիշ խորհրդապատկեր (emblème) չկայ: Ոմանց մէջ պատկերներ կը պահեն սեղանին (autel) տակ, թիւրքերու սոփորական հալածանքէն զերծ մնալու համար: Ա. Յովհաննու մատրան մէջ շատ լաւ կը պահեն Ա. Սկզբնորս պապին աջը (bras), Միմ Հայտարարի արքեպիսկոպոս Սուրբ Գրիգոր Լուսաւորչին աջը, Ա. Նիկիոյ պապին աջը, երեքն ալ արծաթի մէջ զրուած և զարդարուած թանկագին քարերով ըստ օրինի լատինացի: Ա. Պարոտ մատրիի աջն ալ ունին, բայց առանց ուրիշ զարդարանքի:

Շատ մը հայերէն Աւետարաններ ունին արծաթապատ, նաև արծաթ բուրձառներ և խաչեր, քանի մը հին ոճով հռոմէական խոյրեր (mitre), գիպակէ նախարար մը (pluvial en brocart), երկաթէ ամբողջ մը պաշտամունքի (tabouret d'office en fer), որոնք կ'ըստէր թէ Հռոմէն զրկուած են, բայց մաշած են հնութիւնէ: Շատ մը շուրջառներ (pluvial) ալ ունին իրենց երկրին ուճով, զորս պատարագի տանն կը դարձան: Աւին երկու ձեռագիր Աստուածաշունչ, մին

(*) «Délivrez—nous de la tyrannie sous laquelle nous vivons, alors nous deviendrons latins (catholiques); vous serez alors maîtres de nos corps et de nos âmes et nous ferons ce que vous nous commandez»:

մանրանկարով, և ուրիշ շատ մը գիրքեր: Ամէն բան լաւ կը պահուի և յանձնուած է մատուար քահանաներու՝ ազգին անունով:

Այս կաթողիկոսին իշխանութեան ներքեւ են քանչորս առաջնորդներ (prélat), եպիսկոպոս թէ արքեպիսկոպոս, և կաթողիկոսական եկեղեցիին ամենէն մօտիկ տաներկու եպիսկոպոսներն են որ կ'ընտրեն կաթողիկոսը: Բայց երբեմն այնչափ ժողովուրդին երեկոյններն են որ կը նշանակեն կաթողիկոսը թիւրքը պաշտօնականութեւ հրամանով և պաշտպանութեամբ, և ետքը կը խնդրեն եպիսկոպոսներու և արքեպիսկոպոսներուն հաւանութիւնը: Ուրիշ անգամներ ալ, երբ կաթողիկոսները ծերանան, քանի մը եպիսկոպոսներու և ազգին երեկոյններուն հաւանութեամբ, օգնական մը կ'առնեն իրենց, նոյն տանն նշանակելով իրենց յաջորդ: Հիմա կուտն կաթողիկոսը, Ազարիա՝ այնպէս եղած է, այսինքն իր նախորդէն նշանակուած է եպիսկոպոս Սուրբ-Սովիայի և օգնական կաթողիկոսութեան, երբ քաղաքի էր և վարժապետ, և իր նախորդին վանանութեւն կարք ազգին կողմէն ընդունուեցաւ ու հաստատուեցաւ:

Այս կաթողիկոսին իշխանութեան ներքեւ են գրեթէ 20,000 բնակիչներ, որք կը բնակին Կիլիկիոյ և Սիւրիոյ քաղաքներուն, գիւղերուն և բերդերուն մէջ: Քսան վանք կայ՝ հարիւր վանականներով, երեք հարիւրէ աւելի քահանաներով և շատ մը սարկաւազներով ու կղերներով:

Ասոնց ամենէն զիտուններն են.

Ազարիա կաթողիկոս,
Պարոտ վարդապետ կարկառեցի,
Յովհաննէս Եպս. Զեթուսի,
Տիրատուր վարդապետ Տիւրիկի,
Դաւիթ Արքեպս. Երուսաղէմի:

Կաթողիկոսը կ'ապրի նաւերնով և ոչօրմութիւնով. տանն մը տուն գլուխ տարեկան տարք մը կ'առնէր, բայց թիւրքը խլեց զայն իր ձեռքէն. ապրիլու համար՝ այցելելով չարունակ ժողովուրդ ազգին մէջ, որ կուտայ իրեն պէտք եղածը, և իր հօտին յանձն առած այս զրկունքով է որ ան կը պահէ իր վանականներն ու սպասաւորները:

Վերոյիշեալ կաթողիկոսին, պաշտպան կարախնային հրամանով, արուած է ոսկեթիկ խոյր մը, ոսկի սկիւ՝ արծաթ մազգլմայով, մարմնակալ մը և քսակ մը, արծաթ թելով բանուած մարմնակալ մը, Աստուածամոր երկու պատկեր, անագեայ 25 սկիւ իրենց մազգլմաներով, նկատելով որ շատ մը եկեղեցիներու մէջ պատարագ կ'ընեն վայրէ, սպակիէ կամ կաւ սկիւներով:

Հայ ազգին զխաւոր հերիսիկոսութիւններն ու մարտութիւնները նոյն են Յակոբիկներուն հետ:

Կրան թէ Տէրն մեր Յիսուս Գրիստոս ունի մի բնութիւն, մի կամք և մի ներգործութիւն:

Կը սրբալինեն Դեռակորսը:

Ասաջին երեք տիկերական ժողովները միայն կը հանչանան:

Սուրբ Աստուածի (երեքսրբեանի) մէջ կ'աւելցնեն որ խաչկաւ վանի մեր: Ասկէ զատ զուտ անապակ գինիով կը պատարագեն առանց ջուրի:

Այս գրութիւնը կարճ կապելու համար կը լռեմ ուրիշ մտորութեանց մասին: